

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքի նախնականութեամբ եւ ՎԱՏԻՓ-ի Կրթական Կազմի աջակցութեամբ արեւմտահայերէնի պահպանութեան եւ զարգացման առնչութեամբ պուստայ վարժարաններու համար Յատուկ Նշանակութեան Յանձնախումբի առաջին աշխատանքային երկօրեայ ժողովը գումարուեցաւ երկուշաբթի եւ երեքշաբթի՝ 23 եւ 24 Փետրուար 2015-ին, Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի «Պիլեք» սրահին մէջ:

Ժողովին ներկայ էին Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Արեւմտահայերէնի տարածման ծրագիրներու աւագ վարիչ Անի Կարմիրեան, յանձնախումբի խորհրդատու Տէր. Անահիտ Տօնապետեան, եւ անդամներ՝ Սիւզան Աչքբէ, Ժպտուն Զուռնանը, Մարալ Հերկելեան-Էօզտալ, Թամար Մանկասարեան, Սերտա Միրաօզլու, Սարենիկ Նեան, Արմէն Սարուխանեան, Սեւան Տէյիրմենեան, Արուսեակ Քոչ-Մոնէ, Սիլվա Գույումեան-Մարկոսեան:

Քննարկուեցան յանձնախումբին կազմակերպչական երեսակները, գործունէութեան աշխատանքային ծրագիրը եւ համապատասխան ժամկէտերը: Ժողովի աշխատանքները ընդգրկեցին պուստայ վարժարաններուն **ինքնագնահատումի** եւ **առաւել զարգացման** գործընթացը եւ անկէ բխող առաջիկային **որդեգրուելիք ծրագիրները**, յատկապէս՝ պուստայ վարժարաններուն մէջ արեւմտահայերէնի բարելաման վերաբերող նախնականութիւնները: Մշակուեցան նաեւ գործնական քայլեր՝ յօգուտ վերանշեւալ առաջադրանքներու գործադրման:

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքի պուստայ վարժարաններուն ուղղուած աջակցութիւնը պիտի շարունակուի հիմնուելով վերոյիշեալ աշխատանքային ծիրին վրայ:

**ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆԵՐԻ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՅԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ**